



Համարը N 169-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2011.05.23/11(394).1
Հոդ. 209.1

Ընդունող մարմինը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

Ստորագրող մարմինը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ

Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 02.06.2011

Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 13.04.2011

Ստորագրման ամսաթիվը 13.04.2011

Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

+ Կապեր այլ փաստաթղթերի հետ

+ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
13 մայիսի 2011 թ.
Պետական գրանցման թիվ 60011222

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

13 ապրիլի 2011 թ.
ք. Երևան

N 169-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դ) ենթակետը, 2-րդ կետի բ) ենթակետը, 3-րդ կետի գ) ենթակետը և 17-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը (հավելված):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

1) 2006 թվականի մարտի 7-ի «Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 28-Ն որոշումը,

2) 2006 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի N 28-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 212-Ն որոշումը,

3) 2006 թվականի նոյեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի N 28-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 266-Ն որոշումը,

4) 2006 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի N 28-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 307-Ն որոշումը,

5) 2007 թվականի ապրիլի 20-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի N 28-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N189-Ն որոշումը,

6) 2007 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի N 28-Ն որոշման պաշտոնական պարզաբանման մասին» N 262 որոշումը,

7) 2007 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի N 28-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 362-Ն որոշումը,

8) 2008 թվականի ապրիլի 30-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի N 28-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 221-Ն որոշումը,

9) 2008 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի N 28-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 298-Ն որոշումը,

10) 2008 թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի N 28-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 485-Ն որոշումը,

11) 2009 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի N 28-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 211-Ն որոշումը,

12) 2010 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի N 28-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 211-Ն որոշումը,

13) 2010 թվականի հոկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի մարտի 7-ի N 28-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 562-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
նախագահ՝**

Ռ. Նազարյան

Հավելված

*Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2011 թվականի ապրիլի 13-ի
N 169-Ն որոշմամբ*

Կ Ա Ր Գ

ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Սույն կարգը սահմանում է ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության հայտի (դիմումի) ընդունման, քննարկման, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (մերժման), ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման ընթացակարգերը:

1. Սույն կարգում օգտագործված հասկացությունները

1. Սույն կարգում օգտագործված հասկացություններն են՝

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով:

Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից իրավաբանական կամ ֆիզիկական անձին տրված փաստաթուղթ, որը հավաստում է ռադիոհաձայնականությունների տիրույթի որոշակի հատված օգտագործելու նրա իրավունքը և պարտականությունը: Թույլտվության անբաժանելի մասն են համարվում ռադիոհաձայնականության օգտագործման պայմանները:

Ռադիոսարքավորում՝ ռադիոալիքի արձակման կամ ընդունման միջոցով հաղորդակցության հնարավորություն ընձեռող սարքավորում կամ դրա այն մասը, որը շահագործվում է ռադիոհաղորդակցության համար հատկացված ռադիոհաձայնականությունների տիրույթում:

Հայտատու՝ Թույլտվություն ստանալու կամ Թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման նպատակով Հանձնաժողով դիմած անձ:

Հայտ՝ Թույլտվություն ստանալու կամ Թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման համար Հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի փաթեթ:

2. Սույն կարգի գործողության շրջանակները

2. Սույն կարգը տարածվում է 3 կիլոհերցից բարձր և 1000 գիգահերցից ցածր ռադիոհաձայնականությունների տիրույթում աշխատող Ռադիոսարքավորումներ օգտագործող անձանց վրա, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի:

3. Սույն կարգը չի տարածվում՝

- 1) ռադիոհաձայնականությունների այն տիրույթներում աշխատող Ռադիոսարքավորումների վրա, որոնք օգտագործվում են բացառապես պետական (կառավարական) մարմինների կողմից,
- 2) հեռուստատեսային և ձայնային ծրագրերի հեռարձակման համար օգտագործվող Ռադիոսարքավորումների վրա,
- 3) սիրողական ռադիոսպերատորների վրա,
- 4) մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով տրամադրվող Թույլտվությունների վրա:

4. Թույլտվություն չի պահանջվում՝

- 1) ցամաքային շարժական բջջային կապի բաժանորդային կայանների (տերմինալների) օգտագործման համար,
- 2) շարժական արբանյակային կապի գլոբալ համակարգերի շարժական երկրային բաժանորդային կայանների (տերմինալների) օգտագործման համար,
- 3) մինչև 5 Վտ հզորությամբ առանց բաց ճառագայթման կենցաղային և բժշկական գերբարձր ռադիոհաձայնականության սարքավորումների օգտագործման համար,
- 4) 10 մետր հեռավորության վրա հետևյալ մագնիսական դաշտի լարվածությամբ ինդուկցիոն սարքավորումների (ռադիոհաձայնականային նույնացման, հսկող ռադիոազդանշանային, ապրանքների նույնացման, անձնական նույնացման, արտադրանքի հսկման) օգտագործման համար՝
 - ա. 9 - 59,75 կՀց ռադիոհաձայնականությունների շերտում աշխատող, մինչև 72 դԲ (մկԱ/մ),
 - բ. 59,75 - 60,25 կՀց, 70 - 119 կՀց, 6765 - 6795 կՀց, 13,553 - 13,567 ՄՀց, 26,957 - 27,283 ՄՀց ռադիոհաձայնականությունների շերտերում աշխատող, մինչև 42 դԲ (մկԱ/մ),
 - գ. 60,25 - 70 կՀց ռադիոհաձայնականությունների շերտում աշխատող, մինչև 69 դԲ (մկԱ/մ),
 - դ. 119 - 135 կՀց ռադիոհաձայնականությունների շերտում աշխատող, մինչև 66 դԲ (մկԱ/մ),
 - ե. 7400 - 8800 կՀց ռադիոհաձայնականությունների շերտերում աշխատող, մինչև 9 դԲ (մկԱ/մ),
- 5) 125 - 135 կՀց ռադիոհաձայնականությունների շերտում աշխատող, մինչև 10 մՎտ համարժեք - իզոտրոպ հզորությամբ, անվաղողերը վերահսկող անլար կապի սարքավորումների օգտագործման համար,
- 6) 315 - 600 կՀց ռադիոհաձայնականությունների շերտում աշխատող, 10 մետր հեռավորության վրա մինչև -5 դԲ (մկԱ/մ) մագնիսական դաշտի լարվածությամբ, 30 - 37,5 ՄՀց ռադիոհաձայնականությունների շերտում աշխատող, մինչև 1 մՎտ հզորությամբ, 402 - 405 ՄՀց ռադիոհաձայնականությունների շերտում աշխատող, մինչև 25 մկՎտ հզորությամբ բժշկական իմպլանտատների օգտագործման համար, 457 կՀց ռադիոհաձայնականությամբ աշխատող, 10 մետր հեռավորության վրա, մինչև 7 դԲ (մկԱ/մ) մագնիսական դաշտի լարվածությամբ, ձևակույտի հետևանքով զոհերի փնտրման սարքերի օգտագործման համար,
- 7) 3155 - 3400 կՀց ռադիոհաձայնականությունների շերտում աշխատող, 10 մետր հեռավորության վրա մինչև 13,5 դԲ (մկԱ/մ) մագնիսական դաշտի լարվածությամբ, 33,2 - 48,5 ՄՀց, 57 - 57,5 ՄՀց ռադիոհաձայնականությունների շերտերում աշխատող, մինչև 10 մՎտ հզորությամբ, անլար լսողական սարքերի օգտագործման համար,
- 8) 6765 - 6795 կՀց, 13,559 - 13,567 ՄՀց ռադիոհաձայնականությունների շերտերում աշխատող, 10 մետր հեռավորության վրա, մինչև 42 դԲ (մկԱ/մ) մագնիսական դաշտի լարվածությամբ, 26,957 - 27,283 ՄՀց, 40,660 - 40,700 ՄՀց, 433,05 - 434,79 ՄՀց ռադիոհաձայնականությունների շերտերում աշխատող, մինչև 10 մՎտ հզորությամբ, 24,0 - 24,25 ԳՀց ռադիոհաձայնականությունների շերտում աշխատող, մինչև 100 մՎտ հզորությամբ, ոչ մասնագիտացված

սարքավորումների (հեռակառավարման, հեռուստաչափության, հեռուստակառավարման, ազդանշանման) օգտագործման համար,

9) 2400 - 2483,5 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտում աշխատող, մինչև 100 մՎտ հզորությամբ, անլար հասանելիության լայնաշերտ սարքավորումների օգտագործման համար,

10) 5150 - 5250 ՄՀց, 5725 - 5875 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերում աշխատող, մինչև 100 մՎտ հզորությամբ, լոկալ ցանցերի սարքավորումների օգտագործման համար (միայն շենքերի ներսում, ինչպես նաև օդանավերում՝ երկրի մակերևույթից 3000 մետրից բարձր թռիչքի ժամանակ), 5250 - 5350 ՄՀց, 5470 - 5725 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերում աշխատող, մինչև 100 մՎտ հզորությամբ, լոկալ ցանցերի սարքավորումների օգտագործման համար (օդանավերում՝ երկրի մակերևույթից 3000 մետրից բարձր թռիչքի ժամանակ),

11) 26,957 - 27,283 ՄՀց, 34,995 - 35,225 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերում աշխատող, մինչև 10 մՎտ հզորությամբ, 28,0 - 28,2 ՄՀց, 40,660 - 40,700 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերում աշխատող, մինչև 1 Վտ հզորությամբ, մոդեմների ղեկավարման սարքավորումների օգտագործման համար,

12) 66 - 74 ՄՀց, 87,5 - 92 ՄՀց, 100 - 108 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերում աշխատող, մինչև 10 մՎտ հզորությամբ, 151 - 162,7 ՄՀց, 163,2 - 168,5 ՄՀց, 174 - 230 ՄՀց, 470 - 638 ՄՀց, 710 - 726 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերում աշխատող, մինչև 5 մՎտ առավելագույն հզորությամբ, 165,5 - 167,3 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտում (165,70 ՄՀց, 166,10 ՄՀց, 166,50 ՄՀց, 167,15 ՄՀց ֆիքսված ռադիոհաճախականություններ), մինչև 20 մՎտ հզորությամբ, ռադիոխոսափողների օգտագործման համար,

13) 87,5 - 92 ՄՀց, 863 - 865 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերում աշխատող, մինչև 10 մՎտ հզորությամբ, 1795 - 1800 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտում աշխատող, մինչև 20 մՎտ հզորությամբ, անլար աուդիոսարքավորումների օգտագործման համար,

14) 26,945 ՄՀց, 26,960 ՄՀց ռադիոհաճախականություններով աշխատող, մինչև 2 Վտ հզորությամբ, 433,05 - 434,79 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերում աշխատող, մինչև 5 մՎտ հզորությամբ, 868-868,2 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտում աշխատող, մինչև 10 մՎտ հզորությամբ, հսկող ռադիոազդանշանային սարքավորումների օգտագործման համար, 149,95 - 150,06 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտում աշխատող, մինչև 25 մՎտ հզորությամբ, հսկող ռադիոազդանշանային սարքավորումների (հեռավոր օբյեկտներում) օգտագործման համար,

15) 30 - 41 ՄՀց, 1880 - 1900 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերում աշխատող, մինչև 10 մՎտ հզորությամբ, անլար հեռախոսասարքերի օգտագործման համար,

16) 1710 - 1785 ՄՀց, 1805 - 1880 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտերում աշխատող ներսրահային բջջային կապի սարքավորումների (օդանավերում՝ երկրի մակերևույթից 3000 մետրից բարձր թռիչքի ժամանակ Հայաստանի Հանրապետության շարժական կապի օպերատորների հետ ռոտմինգային համաձայնագրի առկայության դեպքում) օգտագործման համար,

17) 9200 - 9975 ՄՀց, 10,5 - 10,6 ԳՀց, 13,4 - 14 ԳՀց ռադիոհաճախականությունների շերտերում աշխատող, մինչև 25 մՎտ հզորությամբ, 24,00 - 24,25 ԳՀց ռադիոհաճախականությունների շերտում աշխատող, մինչև 100 մՎտ հզորությամբ, տեղաշարժի և ռադիոազդանշանի հայտնաբերման սարքավորումների (փոքր հզորության ռադարներ՝ օբյեկտի դիրքը, արագությունը և այլ բնութագրերը որոշելու համար) օգտագործման համար,

18) 10,7 - 12,75 ԳՀց, 14,0 - 14,5 ԳՀց ռադիոհաճախականությունների շերտերում աշխատող արբանյակային կապի երկրային կայանների (օդանավերում՝ երկրի մակերևույթից 3000 մետրից բարձր թռիչքի ժամանակ ինքնաթիռ-արբանյակ կապուղու կազմակերպման համար) օգտագործման համար,

19) 26,957 - 27,09 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտում աշխատող, 10 մետր հեռավորության վրա, մինչև 42 դԲ (մկԱ/մ) մագնիսական դաշտի լարվածությամբ, 2446 - 2454 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտում աշխատող, մինչև 100 մՎտ հզորությամբ, երկաթուղուն ավտոմատ նույնացման սարքավորումների օգտագործման համար,

20) 13,553 - 13,567 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտում աշխատող, 10 մետր հեռավորության վրա, մինչև 60 դԲ (մկԱ/մ) մագնիսական դաշտի լարվածությամբ, 2446 - 2454 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտում աշխատող մինչև 100 մՎտ հզորությամբ, ռադիոհաճախականային նույնացման սարքավորումների օգտագործման համար,

21) 446 - 446,1 ՄՀց ռադիոհաճախականությունների շերտում աշխատող, մինչև 0,5 Վտ հզորությամբ, անձնական ռադիոկայանների (ոչ մասնագիտական) օգտագործման համար:

(4-րդ կետը խմբ. 11.05.12 N 159-Ն)

5. Սույն կարգի 4-րդ կետի 4-8-րդ, 10-15-րդ, 17-20-րդ ենթակետերում նշված փոքր շառավղով անլար կապի համակարգերն օգտագործվում են Հեռահաղորդակցության միջազգային միության ուղեցույցների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում թույլտվություն ունեցող անձանց ռադիոսարքավորումներում խանգարումներ չառաջացնելու և այդ ռադիոսարքավորումներից առաջացող խանգարումներից պաշտպանություն չպահանջելու պայմանով:

(5-րդ կետը խմբ. 11.05.12 N 159-Ն)

3. Ընդհանուր դրույթներ

6. Եթե էլեկտրոնային հաղորդակցության որևէ ցանցի շահագործման կամ ծառայություն մատուցելու համար անհրաժեշտ է ռադիոհաճախականությունների օգտագործում, ապա անձը չի կարող տվյալ ցանցն օգտագործել կամ ծառայությունը մատուցել առանց Թույլտվության:

7. Հանձնաժողովը Թույլտվություն տրամադրում է Հայաստանի Հանրապետության հաճախականությունների բաշխումների աղյուսակ հաստատող իրավական ակտին համապատասխան, իր տնօրինման տակ գտնվող ռադիոհաճախականությունների տիրույթից:

8. Թույլտվության գործողության առավելագույն ժամկետը սահմանվում է 10 տարի:

9. Թույլտվության տրամադրման, ռադիոհաճախականությունների օգտագործման, Թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման համար վճարվում է պարտադիր վճար, որի չափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով: Վճարումն իրականացվում է համաձայն «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1-րդ հոդվածի և սույն կարգի:

10. Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

11. Թույլտվության գործողությունը չի տարածվում Թույլտվություն ունեցող անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Թույլտվություն ունեցող անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

12. Թույլտվություն ունեցող անձը կարող է օգտագործել այդ ռադիոհաճախականությունը Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից և Թույլտվության գործողության ժամկետում:

13. Թույլտվություն ունեցող անձի կողմից Թույլտվությամբ իրեն տրամադրված ռադիոհաճախականությունների փաստացի չօգտագործումը Թույլտվություն ունեցող անձին չի ազատում իրեն տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման համար սահմանված վճարներ վճարելու պարտականությունից:

14. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կամ սույն կարգի, կամ Թույլտվության պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում, Հանձնաժողովը կարող է կիրառել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները, այդ թվում՝ կասեցնել կամ դադարեցնել ռադիոհաճախականության օգտագործման թույլտվությունը:

4. Թույլտվություն ստանալու հայտի քննարկումը և որոշման ընդունումը

15. Թույլտվություն ստանալու համար անձը Հանձնաժողով է ներկայացնում՝

1) *(Էնթալետն ուժը կորցրել է 07.11.12 N 442-Ն)*

2) անձնագրի պատճենը, եթե հայտատուն ֆիզիկական անձ է.

3) Թույլտվության տրամադրման վճարի 1 տոկոսի վճարումը հավաստող անդորրագիրը կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը, կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը.

4) Համապատասխան տեղեկություններ՝ համաձայն սույն կարգի N 1-N 4 հավելվածներով տրված ձևերի: *(15-րդ կետը խմբ. 06.06.12 N 201-Ն, փոփ., խմբ. 07.11.12 N 442-Ն)*

16. Հայտը և նրանում ընդգրկված փաստաթղթերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին:

17. Հայտատուն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների հավաստիության համար:

18. Հայտատուի ներկայացրած Հայտը մուտքագրվում է Հանձնաժողովում: Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումը ստուգում է Հայտի ամբողջականությունը, նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունն ու համապատասխանությունը սույն կարգի 15-րդ կետին և N 1-N 4 հավելվածներին:

19. *(Կետն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն)*

20. Սյն դեպքերում, երբ Հայտում նշված և սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի առարկա չհանդիսացող ռադիոհաճախականությունները օգտագործվում են կամ նախատեսված են պետական (կառավարական) մարմինների ռադիոսարքավորումների օգտագործման համար, Հանձնաժողովն սկսում է համապատասխան մարմինների հետ համակարգման աշխատանքներ՝ ռադիոհաճախականությունների օգտագործման պայմաններում լրացուցիչ պայմաններ ամրագրելու նպատակով:

21. Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝

1) նրանում ընդգրկված փաստաթղթերը չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ իրավական ակտերի և սույն կարգի պահանջներին.

2) ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները թերի են, կեղծ կամ խեղաթյուրված, ներկայացված փաստաթղթերում և տեղեկություններում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ.

3) Հայտատուն՝ օրենքի, իսկ իրավաբանական անձ հանդիսացող Հայտատուն՝ նաև իր կանոնադրության համաձայն իրավունք չունի օգտագործել հայցվող ռադիոհաճախականությունը:

22. Հանձնաժողովը Հայտի ստուգման բացասական արդյունքի մասին գրավոր տեղեկացնում է Հայտատուին՝ Հայտն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ստուգման բացասական արդյունքի դեպքում Հայտը պահպանվում է Հանձնաժողովում:

(22-րդ կետը խմբ. 31.07.13 N 277-Ն)

23. Հայտատուն, Հանձնաժողովի կողմից Հայտի ստուգման արդյունքում հայտնաբերված թերությունները վերացնելուց կամ բացակայող փաստաթղթերը լրացնելուց հետո դրանք ներկայացնում է Հանձնաժողով: Այդ դեպքում Հայտի ստացման օր է համարվում բացակայող կամ ճշտագրված փաստաթղթերը հանձնաժողովում մուտքագրելու օրը: Դրանից հետո Հայտատուն և Հանձնաժողովն առաջնորդվում են սույն կարգի 18-22-րդ կետերով սահմանված պահանջներով և ժամկետներով:

24. Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում Հանձնաժողովն սկսում է Հայտի քննարկման գործընթացը և կայացնում համապատասխան որոշում՝ Հայտն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

(24-րդ կետը խմբ. 31.07.13 N 277-Ն)

25. Հայաստանի Հանրապետության տարածքում ռադիոհաճախականությունների օգտագործման և դրանց միջազգային իրավական պաշտպանության ապահովման համար Հեռահաղորդակցության միջազգային միության ռադիոկապի բյուրոյում հատկացվող ռադիոհաճախականությունների գրանցման աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև սույն կարգի 20-րդ կետով նախատեսված համակարգման աշխատանքների համար ծախսված ժամանակը չի ներառվում սույն կարգի 24-րդ կետում սահմանված ժամկետում:

26. (կետն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն)

27. Հանձնաժողովը Հայտը մերժում է, եթե՝

- 1) Հայտատուն օրենքով սահմանված կարգով անվճարունակ կամ սնանկ է ճանաչված.
- 2) հայտագրված ռադիոհաճախականության կամ ռադիոհաճախականության տիրույթի օգտագործումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության սահմանափակ ռեսուրսների անարդյունավետ օգտագործման.
- 3) Հայտում բերված տեխնիկական ցուցանիշները չեն համապատասխանում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տեխնիկական կանոնակարգերին.
- 4) Թույլտվություն տալու դեպքում սահմանափակվում է մեկ այլ Թույլտվություն ունեցող անձին տրված իրավունքը կամ կարող է բացասական ազդեցություն ունենալ նրա գործունեության տեխնիկական ցուցանիշների վրա.

5) (ենթակետն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն)

6) Հայտատուի ներկայացրած փաստաթղթերում կամ տեղեկություններում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ, ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները թերի են, կեղծ կամ խեղաթյուրված:

(27-րդ կետը փոփ. 31.07.13 N 277-Ն)

28. Հայտի վերաբերյալ Հանձնաժողովի առարկությունները հաշվի առնելուց հետո, անձը, սույն կարգի 15-րդ կետով սահմանված կարգով, կարող է կրկին Հայտ ներկայացնել Հանձնաժողով:

29. Թույլտվություն տրամադրելու վերաբերյալ դրական որոշում ընդունելուց հետո, Հանձնաժողովը որոշման պատճենը 2 աշխատանքային օրվա ընթացքում փոստով ուղարկում է դիմողին, իսկ եթե դիմողը դրա մասին խնդրել է հայտը ներկայացնելու ժամանակ՝ էլեկտրոնային համակարգի միջոցով 1 աշխատանքային օրվա ընթացքում: Մինչև վերջինիս ներկայանալը Թույլտվությունը պահվում է Հանձնաժողովի համապատասխան ստորաբաժանումում:

(29-րդ կետը խմբ. 31.07.13 N 277-Ն)

30. Հայտի մերժման մասին Հանձնաժողովի որոշումը չի կարող ազդեցություն ունենալ անձի հաջորդ Հայտերի քննարկման վրա:

31. Հայտի մերժման դեպքում, որոշումն ընդունելուց հետո, որոշման պատճենը 2 աշխատանքային օրվա ընթացքում փոստով ուղարկվում է Հայտատուին, իսկ եթե Հայտատուն դրա մասին խնդրել է հայտը ներկայացնելու ժամանակ՝ էլեկտրոնային համակարգի միջոցով 1 աշխատանքային օրվա ընթացքում:

(31-րդ կետը խմբ. 31.07.13 N 277-Ն)

32. Հանձնաժողովում յուրաքանչյուր Թույլտվություն ունեցող անձի համար վարվում է հաշվառման գործավարություն և կազմվում գործ:

33. Թույլտվություն ստացած անձի ստորագրությամբ Թույլտվության ստացման կտրոնը (սույն կարգի N6 հավելված) պահվում է Հանձնաժողովում:

34. Թույլտվության գործողությունը դադարեցվելու դեպքերում գործը պահվում է Հանձնաժողովում:

35. Թույլտվությունների տրամադրման գործընթացին առնչվող Հանձնաժողովի որոշումները ծանոթանալու նպատակով պետք է մատչելի լինեն ցանկացած շահագրգիռ անձի համար, եթե դրանք չեն պարունակում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական, ծառայողական կամ առևտրային գաղտնիքներ:

5. Թույլտվության գործողության ժամկետի երկարաձգումը

36. Թույլտվությունում ամրագրված ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում Թույլտվություն ունեցող անձը պարտավոր է Թույլտվության գործողության ժամկետի ավարտից առնվազն 15 աշխատանքային օր առաջ Հայտով դիմել Հանձնաժողով:

(36-րդ կետը փոփ. 31.07.13 N 277-Ն)

37. (կետն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն)

38. (կետն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն)

39. Հայտը մերժվում է, եթե՝

1) (ենթակետն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն)

2) (ենթակետն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն)

3) (ենթակետն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն)

4) առաջին անգամ տրված Թույլտվության գործողության ժամկետի ընթացքում Թույլտվություն ունեցող անձը գործունեությունն իրականացրել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կարգի էական խախտմամբ.

5) Թույլտվություն ստացած անձը Թույլտվությունում սահմանված ժամկետում տրամադրված ռադիոհաճախականությունը չի օգտագործել:

(39-րդ կետը փոփ. 31.07.13 N 277-Ն)

40. Հանձնաժողովը Թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման կամ երկարաձգման մերժման վերաբերյալ որոշում է ընդունում Հայտը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում և որոշման պատճենը 2 աշխատանքային օրվա ընթացքում փոստով ուղարկում է Հայտատուին, իսկ եթե Հայտատուն դրա մասին խնդրել է հայտը ներկայացնելու ժամանակ՝ էլեկտրոնային համակարգի միջոցով 1 աշխատանքային օրվա ընթացքում:

(40-րդ կետը խմբ. 31.07.13 N 277-Ն)

41. Եթե Հայտը ներկայացվել է Թույլտվության գործողության կասեցման ժամանակահատվածում, ապա այն քննարկվում է միայն կասեցման վերացումից հետո:

(կարգը խմբ. 11.05.12 N 159-Ն, խմբ., լրաց. 06.06.12 N 201-Ն, փոփ., խմբ. 07.11.12 N 442-Ն, փոփ., խմբ. 31.07.13 N 277-Ն)

Հավելված N 1
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2011 թվականի ապրիլի 13-ի N 169-Ն
որոշմամբ հաստատված կարգի

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՌԱԴԻՈՌԵԼԵԱՅԻՆ ԿԱՊԻ ԳԾԵՐԻ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Ընդհանուր տեղեկություններ

- 1. Հայտատու (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը) _____
- 2. Բանկային հաշվի համարը, Բանկի անվանումը _____
- 3. Հարկ վճարողի հաշվառման համարը _____
- 4. Գտնվելու վայրը _____
- 5. Փոստային հասցեն _____
- 6. Հեռախոս, ֆաքս _____
- 7. Ռադիոռելեային կապի գծի օգտագործման նպատակը _____
- 8. Ռադիոռելեային կապի գծի անվանումը _____

9. Ռադիոռելեային կապի գծերի կայանների տեղադրման վայրը, աշխարհագրական կոորդինատները և բարձրությունը ծովի մակերևույթից

Հ/հ	Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը	Ռադիոռելեային կապի գծի կայանների տեղադրման վայրերը		Աշխարհագրական կոորդինատները		Բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	
		կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2
1	2	3	4	5	6	7	8

10. (կետն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն)

Տեխնիկական տվյալներ

11. Ռադիոռելեային կայանի տեսակը _____
(անալոգային, թվային)

12. Ռադիոհաճախականությունների տիրույթը (ՄՀց) _____

13. Պահանջվող ռադիոհաճախականությունները (ՄՀց)

Հ/հ	Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը	Պահանջվող ռադիոհաճախականությունները (հաղորդման) (ՄՀց)	
		կայան 1	կայան 2
1	2	3	4

14. Հաղորդչի հզորությունը, ճառագայթման դասը, թվային տեղեկատվության հաղորդման արագությունը

Հ/հ	Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը	Հաղորդչի հզորությունը (Վտ)	Ճառագայթման դասը	Տեղեկատվության հաղորդման արագությունը (կԲԻթ/վ)
1	2	3	4	5

15. Անտենայի տեսակը, բարձրությունը երկրի մակերևույթից, տրամագիծը, ուժեղացման գործակիցը

Հ/հ	Ռադիոռելեային կապի գծի հատվածի	Անտենայի տեսակը	Բարձրությունը երկրի մակերևույթից (մ)	Անտենայի տրամագիծը (մ)	Ուժեղացման գործակիցը (դԲ)

	անվանումը								
		կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2
1	2	3	4	5	6	7	8	9	10

16. Ռադիոռելեային կապի կազմակերպման սխեման (նշել կայանների միջև հեռավորությունները և անտենաների ազիմուտները).

Հայտատու՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն, պաշտոն)

« _____ » _____ 20 թվականի

(*հավելվածը փոփ. 07.11.12 N 442-Ն, 31.07.13 N 277-Ն*)

Հավելված N 2
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2011 թվականի ապրիլի 13-ի N 169-Ն
որոշմամբ հաստատված կարգի

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

**ԱՆԼԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԼԱՅՆԱՇԵՐՏ ՑԱՆՑԻ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ**

Ընդհանուր տեղեկություններ

1. Հայտատու (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը) _____
2. Բանկային հաշվի համարը, բանկի անվանումը _____
3. Հարկ վճարողի հաշվառման համարը _____
4. Գտնվելու վայրը _____
5. Փոստային հասցեն _____
6. Հեռախոս, ֆաքս _____

7. Ցանցի օգտագործման նպատակը _____

8. (կեսն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն) _____

Ընդհանուր տեղեկություններ ցանցի վերաբերյալ

9. Օգտագործվող սարքավորման տեխնիկական ստանդարտի անվանումը _____

(լրացվում է դրա առկայության դեպքում)

10. Ցանցի կազմակերպման տարածքը _____

(մարզ, քաղաք, բնակավայր)

11. Բազային կայանների քանակը _____

Տեխնիկական տվյալներ

12. Ռադիոհաճախականությունների տիրույթը (ՄՀց) _____

13. Ցանցի համար պահանջվող ռադիոհաճախականությունների շերտը (ՄՀց) _____

14. Բազային կայանների տեղադրման վայրը, աշխարհագրական կոորդինատները, Բարձրությունը ծովի մակերևույթից

Բազային կայանի հերթական համարը	Բազային կայանի տեղադրման վայրը	Աշխարհագրական կոորդինատները		Բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	
		3	4	5	6
1	2	3	4	5	6

15. Պահանջվող ռադիոհաճախականությունները, հաղորդչի հզորությունը, ճառագայթման դասը, թվային տեղեկատվության հաղորդման արագությունը

Բազային կայանի հերթական համարը	Ռադիոհաճախականությունը (ՄՀց)	Հաղորդչի հզորությունը (Վտ)	Ճառագայթման դասը	Տեղեկատվության հաղորդման արագությունը (կԲ/իթ/վ)
1	2	3	4	5

16. Անտենաների տեսակը, Բարձրությունը երկրի մակերևույթից, ուժեղացման գործակիցը, ճառագայթման ազիմուտը

Բազային կայանի հերթական համարը	Անտենայի տեսակը, սեկտորի բացվածքը (աստիճան)	Բարձրությունը երկրի մակերևույթից (մ)	Ուժեղացման գործակիցը (դԲ)	Ճառագայթման ազիմուտը (աստիճան)
1	2	3	4	5

Հայտատու՝ _____
 (ստորագրություն, անուն, ազգանուն, պաշտոն)

« _____ » _____ 20 թվականի

(հավելվածը փոփ. 07.11.12 N 442-Ն, 31.07.13 N 277-Ն)

Հավելված N 3
 ՀՀ հանրային ծառայությունները
 կարգավորող հանձնաժողովի
 2011 թվականի ապրիլի 13-ի N 169-Ն
 որոշմամբ հաստատված կարգի

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ՇԱՐԺԱԿԱՆ ՌԱԴԻՈԿԱՊԻ ՑԱՆՑԻ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Ընդհանուր տեղեկություններ

1. Հայտատու (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը) _____
2. Բանկային հաշվի համարը, բանկի անվանումը _____
3. Հարկ վճարողի հաշվառման համարը _____
4. Գտնվելու վայրը _____
5. Փոստային հասցեն _____
6. Հեռախոս, ֆաքս _____
7. Ռադիոկապի օգտագործման նպատակը _____
8. *(կեսոն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն)* _____

Ընդհանուր տեղեկություններ ռադիոկայի ցանցի վերաբերյալ

- 9. Օգտագործվող սարքավորման տեխնիկական ստանդարտի անվանումը _____
(լրացվում է դրա առկայության դեպքում)
- 10. Ռադիոկայի ցանցի կազմակերպման տարածքը _____
(մարզ, քաղաք, բնակավայր)
- 11. Բազային (վերահաղորդիչ) կայանների քանակը _____
- 12. Պլանավորվող բաժանորդային ցանցի ծավալը (բաժանորդների քանակը) _____

Տեխնիկական տվյալներ

- 13. Ռադիոհաճախականությունների շերտերը (ՄՀց) _____
(ընդունման / հաղորդման)
- 14. Դուալեքսային բաժանվածություն (ՄՀց) _____
- 15. Ցանցի համար պահանջվող ռադիոհաճախականությունների քանակը _____

16. Բազային (վերահաղորդիչ) կայանների տեղադրման վայրը, աշխարհագրական կոորդինատները, բարձրությունը ծովի մակերևույթից

Բազային կայանի հերթական համարը	Բազային (վերահաղորդիչ) կայանի տեղադրման վայրը (հասցեն)	Աշխարհագրական կոորդինատները		Բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	
		3	4	5	6
1	2				

17. Պահանջվող ռադիոհաճախականությունները, հաղորդչի հզորությունը, ճառագայթման դասը, թվային տեղեկատվության հաղորդման արագությունը

Բազային կայանի հերթական համարը	Ռադիոհաճախականությունը (ՄՀց)	Հաղորդչի հզորությունը (Վտ)	Ճառագայթման դասը	Տեղեկատվության հաղորդման արագությունը (կԲիթ/վ)
1	2	3	4	5

18. Անտենաների տեսակը, բարձրությունը երկրի մակերևույթից, ուժեղացման գործակիցը, ճառագայթման ազիմուտը

Բազային կայանի հերթական համարը	Անտենայի տեսակը, սեկտորի բացվածքը (աստիճան)	Բարձրությունը երկրի մակերևույթից (մ)	Ուժեղացման գործակիցը (դԲ)	Ճառագայթման ազիմուտը (աստիճան)
1	2	3	4	5

Հայտատու՝ _____
 (ստորագրություն, անուն, ազգանուն, պաշտոն)

« _____ » _____ 20 թվականի

(հավելվածը փոփ. 07.11.12 N 442-Ն, 31.07.13 N 277-Ն)

Հավելված N 4
 ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
 2011 թվականի ապրիլի 13-ի N 169-Ն որոշմամբ հաստատված կարգի

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ԱՄՐԱԿՑՎԱԾ (ՇԱՐԺԱԿԱՆ) ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ԿԱՊԻ ԵՐԿՐԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ՌԱԴԻՈՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Ընդհանուր տեղեկություններ

- Հայտատու (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, պետական հաշվառման համարը, իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, պետական գրանցման համարը) _____
- Բանկային հաշվի համարը, բանկի անվանումը _____
- Հարկ վճարողի հաշվառման համարը _____
- Գտնվելու վայրը _____
- Փոստային հասցեն _____
- Հեռախոս, ֆաքս _____
- Կայի կազմակերպման նպատակը _____
- (կեսն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն)* _____

Տեխնիկական տվյալներ

9. Արբանյակային կապի երկրային կայանի տեղադրման վայրը, աշխարհագրական կոորդինատները, Բարձրությունը ծովի մակերևույթից

Կայանի հերթական համարը	Արբանյակային կապի երկրային կայանի տեղադրման վայրը (հասցեն)	Աշխարհագրական կոորդինատները		Բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	
1	2	3	4	5	6

10. Արբանյակային ցանցի անվանումը և տեղակայման կոորդինատները

Արբանյակային ցանցի անվանումը	Տեղակայման կոորդինատները	
1	2	3

11. Ռադիոհաճախականությունների շերտերը (ՄՀց) _____
(նշվում են հաճախությունների շերտերը հաղորդման/ընդունման)

12. Պահանջվող ռադիոհաճախականությունները, հաղորդչի հզորությունը, ճառագայթման դասը, թվային տեղեկատվության հաղորդման արագությունը

Կայանի հերթական համարը	Ռադիոհաճախականությունները (ՄՀց)		Հաղորդչի հզորությունը (Վտ)	Ճառագայթման դասը	Տեղեկատվության հաղորդման արագությունը (կԲԻթ/վ)
	հաղորդման	ընդունման			
1	2	3	4	5	6

13. Անտենաների տեսակը, տրամագիծը, Բարձրությունը երկրի մակերևույթից, ուժեղացման գործակիցը, ճառագայթման ազիմուտը, տեղի անկյունը

Կայանի հերթական համարը	Անտենայի տեսակը	Տրամագիծը (մ)	Բարձրությունը երկրի մակերևույթից (մ)	Ուժեղացման գործակիցը (դԲ)	Ճառագայթման ազիմուտը (աստիճան)	Տեղի անկյունը (աստիճան)
1	2	3	4	5	6	7

Հայտատու՝ _____
(ստորագրություն, անուն, ազգանուն, պաշտոն)

« _____ » _____ 20 թվականի

(հավելվածը փոփ. 07.11.12 N 442-Ն, 31.07.13 N 277-Ն)

Հավելված N 5
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2011 թվականի ապրիլի 13-ի N 169-Ն
որոշմամբ հաստատված կարգի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
(հավելվածն ուժը կորցրել է 31.07.13 N 277-Ն)

Հավելված N 6
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2011 թվականի ապրիլի 13-ի N 169-Ն
որոշմամբ հաստատված կարգի

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ (ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ) ՍՏԱՅՄԱՆ ԿՏՐՈՆ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի

20 __ թվականի _____ «___» -ի N _____ որոշում

Էլեկտրոնային հաղորդակցության կապի տեսակը՝ _____

Թույլտվության գրանցման ամսաթիվը _____ «___» _____ 20__ թ.

Թույլտվության գրանցման համարը N _____

Ստացված էջերի քանակը՝ _____

Տրված է՝ _____
(Թույլտվություն ստացող Անձի անվանումը)

_____ (հասցեն, հեռախոսը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը)

_____ (Թույլտվություն ստացող Անձի անունը, ազգանունը, անձնագրի կամ այն փոխարինող փաստաթղթի սերիան և համարը,

_____ ում կողմից և երբ է տրված)

Թույլտվությունը ստացվել է՝

« _____ » _____ 20__ թվականի

(Թույլտվություն ստացողի ստորագրությունը)